

338(47.925)

V-24

Uu te u luy fuste

17 h uyruy ne p n o te te lije

1925p

17 FEB 2010

ՅՑԵ:342.54(91.542)

Մ-24

ՀԱՎՈՐ ՄԱՆԱՆԴՅԱՆ

11

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՆԱԿԱՆՆԵՐԻ

ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՄԱՆՁՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

(Արտատպւած Հ. Ա. Խ. Հ. Պետ. Համալսարանի Գիտական Տեղեկագրի
№ 1-ից)

Յ Ե Ր Ե Պ Ա Ն
1925

24.06.2013

Մ-24
5

ՀԱԿՈՒ ՄԱՆԱՆԴՅԱՆ

338(47|920) 17132

Մ-24 ժամանակացու
Մայրաքաղաքի
Կե կայ-ի քի
գրքարանի քի

(7 անգ)

13/1876 27/4/30

17132

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՆԱԿԱՆՆԵՐԻ

ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒԾ



(Արտատպված է Ս. Խ. Հ. Պետ. Համալսարանի Գիտական Տեղեկագրի
№ 1-ից)

Յ Ե Ր Ե Վ Ա Ն
1925

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայոց հնագույն պատմութիւնը, վորի ուսումնասիրութեանը նվիրված են բազմաթիւ աշխատութիւններ հայ և ոտարազգի գիտնականների, մինչև այժմ դեռ ունի ժամանակագրութեան բնույթ: Այդ տեսակետից՝ նաև վերջերս լույս տեսած հայոց պատմութեան ձեռնարկները, ինչպես J. de Morgan-ի, Histoire du peuple arménien (Paris 1919) և J. Sandalagian-ի, Histoire documentaire de l'Arménie des âges du paganisme (Rome 1917, t. I և II), վոչնչով չեն տարբերվում նախկին աշխատութիւններից: Թե այս և թե նախկին յերկերում մասնանշված են ժամանակագրական կարգով հայոց անցյալի փոքր ի շատե ստուգված քաղաքական ու կրօնական անցքերը և միանգամայն աչքաթող ե արված հին Հայաստանի ներքին կյանքը՝ պետական, ընկերական ու տնտեսական: Գլխավոր պատճառն այս խոշոր թերութեան այն է, վոր հայոց հնագույն պատմութեան հիմք ծառայող մատենագրական աղբյուրները խիստ միակողմանի յին իրանց բովանդակութեամբ, նկարագրում են, գլխավորապես, քաղաքական արտաքին դեպքերը, իսկ Հայաստանի ներքին կյանքի կարևորագույն հարցերը նրանք զրեթե չեն շոշափում: Յեթե յերեմն և պատահում են նրանց մեջ աղոտ ակնարկներ յերկրի ու ժողովրդի ներքին կացութեան մասին, միջանկյալ այդ վկայութիւններն այնքան մութն են ու անորոշ, վոր կարոտ են ըննութեան ու լուսարանութեան հատուկ ուսումնասիրութիւնների միջոցով, իսկ առանց այդ չեն կարող նյութ ծառայել պատմական ընդհանրացումների: Հիշատակութեան արժանի միակ ուսումնասիրութիւններն են այդ ուղղութեամբ Նիկ. Արոնցի «Армения в эпоху Юстиниана» (С. Петерб. 1908 г.), մասամբ նաև Ի. Զավախովի «Государственный строй древней Грузии и древней Армении» (С. Петерб. 1905):

Թե ինչն է հին Հայաստանի ներքին կյանքը մինչև այժմ այդքան քիչ ե ուշադրութեան առնվել, այդ բացատրվում ե մասամբ նրանով, վոր հայոց պատմական անցյալը, ինչպես և նրա մատենագրական աղբյուրները, ուսումնասիրել են, մեծ մասամբ, վոչ թե պատմարան մասնագետները, այլ հայագետ բանասերները, վորոնք իրանց ուսումնասիրութիւններին տվել են, բնականաբար, բանասիրական հատուկ բնույթ: Անուբանայի յե, իհարե, վոր հայագետ բանասերները կատարել են հայոց պատմութեան համար ահագին ոժանդակ աշխատանք: Նրանք հրատարակել են ձեռագրերի

բաղդատությամբ հայոց հնագույն մատենագրական յերկերը, թարգմանությունների միջոցով մատչելի յին դարձրել այդ յերկերն ոտաբազդի գիտնականներին, աշխատել են վորոշել հայ պատմիչների ժամանակն ու նրանց պատմական արժեքը, ազդեցությունների համեմատական ու քննական ուսումնասիրությամբ փորձել են ճշտել ու լուսաբանել պատմական առանձին փաստերը, կատարել են բանասիրական և ուրիշ նման կարեւոր աշխատություններ: Սակայն փաստական բոլոր այդ նյութերը, վորքան ել հետազոտված ու ստուգված լինեն բանասերների ջանքերով, պատմական տեսակետից՝ նրանք կըմնան փոշիացած ու անկենդան դրության մեջ, իրրև սոսկ ժամանակագրություն, մինչև վոր չուսումնասիրվեն հայոց պատմական կյանքի նաև ներքին իրական կողմերը և չվորոշվեն նրա սոցիալ-տնտեսական ու քաղաքական այն առանձնահատուկ հիմնական ուժերը, վորոնցով պայմանավորված են թե այդ անցյալի այս կամ այն ընթացքը և թե պատմական առանձին դեպքերի բնական անհրաժեշտությունը: Վորքան ել ազդեցությունների ու նյութերի ազդատության պատճառով դժվար լինեն նոր այս աշխատանքները, կարծում եմ, վոր միանգամայն հնարավոր ե, յեղած նյութերն իսկ հավաքելով ու ոգտագործելով, ղենել հայոց անցյալի պատմագիտական հետազոտությունները նոր հունի մեջ և մասնակի խնդիրների բանասիրական ճշտումներից անցնել հետզհետե ընդհանուր անտություններին: Զգալի արդյունքներ հայոց պատմության կարեւորագույն այս ճյուղում կարող են ստացվել, իհարկե, միայն ապագայում, յերբ հայոց ներքին կյանքի լայն-դիրները հմուտ ու կարող ուժերի հավաքական ջանքերով կենթարկվեն մասնակի ու մանրաքննին ուսումնասիրության: Իսկ այժմ, յերբ այդպիսի աշխատություններ գրեթե չկան, իմ այս հոդվածը նախապատրաստական մի աշխատանք ե միայն, մի շարք դիտողություններ, վորոնց նպատակն ե պարզել շինական դասի դրության հավանական ընդհանուր պծերը Սասնայան Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող մարդկանական Հայաստանում: Պետք ե ասել, վոր շինական դասի սոցիալ-տնտեսական վիճակը հին Հայաստանում հայոց ներքին կյանքի ամենադժվար ուսումնասիրելի խնդիրներից մեկն ե: Մատենագրական ազդեցությունները հատկապես այս դասի վերաբերմամբ լուռ են ու մուռնջ: Պատմական տեղեկություններն այս դասի մասին մի փոքր ավելի պարզ են ու վորոշ հայոց պատմության հետագա պարաշրջանների համար: Թե ինչ դրության մեջ ե գտնվել շինականությունը հետագա այս պարաշրջաններում՝ այդ առանձին մի նյութ ե, վորին մենք վերագտնալու յենք մեր առաջիկա հոդվածներից մեկում:

ՀԱՎԱՍԱՐ ՀՈՂԱԲԱԺԱՆՈՒՄ «ԸՍՏ ՄԱՐԴԱԹՈՒԻ»:

Շինականների ու նրանց տնտեսական կենցաղի նկատմամբ հին Հայաստանում քննության արժանի խիստ կարեւոր մի հարց կա, վոր մինչև այժմ, վորքան ինձ հայտնի յե, հիմնավոր կերպով հարուցված չե յեղել հայագիտական նորագույն աշխատություններում: Այդ համայնական հոգա-

տիրության խնդիրն ե, վոր ինչպես յենթադրում են այժմ, համատարած ու ընդհանուր յերևույթ ե յեղել բոլոր ժողովրդների մեջ նրանց պատմական պարագաման սկզբնական շրջաններում: Վոր համայնական հոգատիրությունը գոյություն ունեցած պիտի լիներ նաև հին Հայաստանում, այդ նրա անցյալ կյանքի համայնական սոհմային հնագույն շրջանի համար միանգամայն անժխտելի յե: Բայց նախարարական Հայաստանում ևս դժվար թե հոգատիրության նախնական կարգերն իսպառ ու անհետ կորած լինեյին: Վորքան ել այդ կարգերը հեղաշրջված ու փոփոխված լինեյին Հայաստանի նախարարական նոր պայմաններում, ավելի քան հավանական ե, վոր պատմական հետագա այս շրջանում ևս նրանցից մնացած պիտի լինեյին վորոշ հետքեր: Անհավանական չե նույն իսկ, վոր համայնական հոգատիրությունը, հարմարեցված լինելով կալվածատիրական նոր պայմաններին, կարող եր հետագա այս ժամանակներում պահպանած լինել իր գոյությունը, կրելով իր հիմնական բովանդակության մեջ սչ այնքան խոշոր փոփոխություններ: Հայոց պատմության մատենագրական ազդեցությունը, ինչպես տեսանք, չունեն հայոց ներքին կյանքի թե այս և թե նման խնդիրների մասին պարզ ու վորոշ տեղեկություններ: Նրանց մեջ կան սակայն միջանկյալ ակնարկ-ներ, վորոնք ըստ ին ուշագրով վորոշ նշաններ են, վոր համայնական հոգատիրությունը գոյություն ունեցած պիտի լիներ հին Հայաստանում մնչ միայն նախնական ժամանակներում, այլ և Արշակունյաց թագավորության շրջանում և նրա անկումից հետո:

Մովսես Խորենացին, խոսելով Արշակունի Տիրան թագավորի մասին, պատմում ե, վոր «եկեալ առ նա կանխագոյն իւրոյ ազգին Արշակունեաց, որ էին ի կողմանս Հաշտանից՝ տան» — Բնդարձակեան մեզ գժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացոք յոյժ: — Եւ նա հրամայէ սմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Ազիտլտի և Աորերանուոյ: Իսկ սոցա առաւել ևս բողոք կալեալ առ արքայի, թե առաւելագոյն նեղ է մեզ՝ ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան. այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, լինի Տիրան. այլ հաստատեալ տրոհել յինքեանս: Զոր բաժանեալ ըստ մարդաթուի՝ գտաւ պակաս ժառանգութիւն բնակողոցն Հաշտանից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառն Ազիտլտի և Աորերանուոյ» (Գիրք Բ, գլ. ԿԲ, Թիֆլիս 1913, էջ 193): Նիկ. Այոնցը «Հայաստանը Յուստինյանի ժամանակ» վերոհիշյալ իր գրքում այս վկայության մեջ հավաստի ու արժեքավոր ե համարում հողի բաժանման սովորությունն ըստ մարդաթվի, վոր ընդունված ե յեղել Արշակունիների բնատնիքում: «Միևնույն սկզբունքները, — ասում ե նա, — վոր գործադրվել են արքայական տան մեջ, գոյություն են ունեցել նաև իշխանական բնատնիքներում. ուստի և պատմագրի մատնանշած բաժան հոգատիրության սովորությունն ունի իր ուժը նաև իշխանական միջավայրի համար: Բայց այս յերևույթը չի վերաբերում Արշակունիների ժամանակին, ինչպես յենթադրում ե պատմագիրը, այլ այստեղ մենք գործ ունենք իրան Խորենացուն ժամանակակից կարգերի հետ, վոր նա վերագրել ե հնագույն ժամանակներին: Ժառանգական

կալվածքի բաժանումն ընտանիքի անդամների մեջ արտահայտություն և սեպուհական իրավունքի: Այդ իրավունքը զարգացել էր, ըստ յերևույթին, վեցերորդ դարում» (Армения в эпоху Юстиниана, էջ 474):

Նիկ. Ադոնցի այս յենթադրությունից հետևում է, վոր Հայաստանում նախարարական տոհմերի մեջ նախ տիրող է յեղել միաժառանգություն ու մայրատի սկզբունքը: Արշակունյաց թագավորության անկումից հետո միայն սկսել է հետզհետե փոխվել ժառանգություն այս կարգը և վեցերորդ դարում զարգացել է արդեն բաժան ու անջատ՝ «սեպուհական» հողատիրությունը: «Սեպուհական» կամ «սեպուհական» անվանվել են այնուհետև այն հողաբաժինները, վոր ժառանգում էյին սեպուհները, այսինքն՝ նախարարական տոհմերի «սեպուհ» կոչված անդամները:

Նիկ. Ադոնցը յենթադրում է ուրեմն, վոր Սորենացու վերոհիշյալ վկայությունը վերաբերվում է նախարարական միջավայրում տեղի ունեցող ժառանգական հողաբաժանումներին:

Սորենացու մութ ու անվորոշ վկայության այս կերպ մեկնումը, թեև շատ հետաքրքիր է ու հրապուրիչ, սակայն ունի առարկելի կետեր և թվում է ինձ խիստ վիճելի:

Նախ և առաջ, դժվար է համաձայնել Նիկ. Ադոնցի հետ, վոր Հայաստանում մայրատի իրավունքի վերացումը և սեպուհական ժառանգման նոր կարգերի զարգացումը տեղի յեն ունեցել վեցերորդ դարում: Վեցերորդ դարից դեռ շատ առաջ սեպուհական կալվածքներ հիշատակվում են Փավստոս Բյուզանդացու պատմության մեջ՝ վորը գրել է իր աշխատությունը հինգերորդ դարի առաջին կեսում: Սոսերով Մերուժան Արժրուհու ու Վանան Մամիկոնյանի ապստամբության ու կրոնափոխության մասին, Փավստոսը հաղորդում է, վոր «ատրուշանս շինէին ի բազում տեղիս, և զմարդիկ հնազանդէին օրինացն Մազզեզանց, և բազում յիւրեանց սեփականսն շինէին ատրուշանս, և զորդիս և զազաչինս իւրեանց տային յուսումն Մազզեզանցն» (Դպր. Դ, գլ. 38, Վենետիկ 1832, էջ 184): Նույն Փավստոսի վկայությամբ՝ Մերուժանը խոստանում է Շապուհ արքային՝ «թէ իցէ և կարացէ յաղթել Շապուհ Հայոց, և ունել զաշխարհն, և ինձ դարձ լիցի յիմ աշխարհն և յիմ տունն, նախ ես՝ առէ՛ շինեցից ատրուշանս յիմում տանն սեպուհականն» (Դպր. Դ, գլ. 39, Վենետիկ 1832, էջ 144):

Փավստոսի այս հողվածներում, ինչպես տեսնում ենք, հիշված են արդեն «սեպուհական» կալվածքներ, ուրեմն՝ պետք է յենթադրել, վոր սեպուհական հողատիրությունը գոյություն ունեցած պիտի լիներ վեցերորդ դարից դեռ շատ առաջ՝ հինգերորդ դարի առաջին կեսում և թերևս նույն իսկ Արշակունյաց թագավորության ժամանակ:

Անկախ ժամանակագրական կարևոր այս խնդրից, վիճելի չէ թվում ինձ նաև Նիկ. Ադոնցի հիմնական այն յեզրակացությունը, վոր իբր թե Սորենացու վերոհիշյալ հատվածի մեջ ակնարկված է ժառանգական գույքի բաժանման կարգը նախարարական ընտանիքների անդամների, այսինքն՝ սեպուհների մեջ:

Ամենաուշագրավը և կարևորը Սորենացու վկայության մեջ վոր այնքան նրա պատմական կողմն է, վոր ավելի քան վիճելի չէ, վոր այն, վոր Հաշտյանը, Աղիովիտ և Առեբրանի գավառներում տեղի չէ ունեցել հողաբաժանում Արշակունյաց տոհմի աճած ու բազմացած սերունդների մեջ, այլ՝ զլիավորապես, հողաբաժանման այն հատուկ կարգը՝ «հավասար» և «ըստ մարդաթվի», վորը, ըստ յերևույթին, գոյություն է ունեցել Հայաստանի իրական կենցաղի մեջ և, հավանաբար, հենց Սորենացու խի ժամանակ: Նիկ. Ադոնցի յենթադրությունը, վոր այդ կարգը վերաբերվում է սեպուհական անջատ հողատիրության, ավելի քան վիճելի չէ: Գժվար է խիստ ընդունել, վոր նախարարական ընտանիքների անդամները կարող էյին տոհմային հողերը ժառանգել «հավասար» և «ըստ մարդաթվի»: Յեթե այդ այդպես լիներ, այդ դեպքում ժառանգատու նախարարների բազմադամ ընտանիք ունեցող վորդիները պետք է ստանային մի քանի անգամ ավելի մեծ հողաբաժիններ, քան նրանց ամուրի վորդիները: Ժառանգության բաժանման այս կարգը խիստ արտասովոր է ու անօրինակ կալվածատեր ազնվական դասի համար: Հողերի «հավասար» և «ըստ մարդաթվի» բաժանումը, վորքան հայտնի չէ, վոր թե սեպուհական ժառանգության, այլ համայնական հողատիրության վորոշ կարգ եմ ճիշտ է, Սորենացու վկայության մեջ պարզ սոված է, վոր հողաբաժանումը Հաշտյանը, Աղիովիտ և Առեբրանի գավառներում տեղի չէ ունեցել Արշակունյաց տոհմում, սակայն նրա վկայության ամենից կասկածելի կետը հենց այն է, վոր նա համայնական հողատիրության վերաբերվող հատուկ կարգերը վերագրել է նաև Արշակունյաց տոհմի աճած ու բազմացած ժառանգներին: «Հավասար» ու «ըստ մարդաթվի» հողաբաժանման սկզբունքը յեղել է, ըստ յերևույթին, Սորենացու ժամանակ իրական ու հանրաժանութ մի փաստ, և ինձ թվում է, վոր Սորենացու վկայության մեջ մատնանշված կարևոր այդ փաստը կարող է ընդունվել, վորպես ուշագրավ մի ակնարկ, վոր Սորենացու ժամանակ Հայաստանում գոյություն են ունեցել, հավանաբար, համայնական հողատիրության վորոշ կարգեր և «հավասար» հողաբաժանում «ըստ մարդաթվի»:

Սորենացու նույն այդ վկայությունը մեկնելիս ի նկատի պետք է ունենալ նաև այն, վոր նա թագավորական սերունդ է համարել վոստանիկների դասը: Այս կարևոր հանգամանքը հիմք կարող է ծառայել յենթադրելու, վոր նրա վկայությունը վերաբերվում է իբրք վոր թե Արշակունյաց տոհմի աճած սերունդներին, այլ վոստանիկ դասին:

«ՈՍՏԱՆ» ՅԵՎ «ՈՍՏԱՆԻԿ ՄԱՐԴԻԿ ՅԱՐՔՈՒՆԻ ՏԱՆԷ»:

Սորենացու յենթադրական կարծիքը վոստանիկ դասի ծագման մասին պարզ արտահայտված է նրա պատմության հետևյալ յերկու հատվածում. 1) Գիրք Բ, գլ. 5, Տփղիս 1913, էջ 111-112. «Եւ գունդս և պահա-

պանս դրան արքունի կարգէ (Վաղարշակ) գչորս, զմի մի խրաքանչիւր բիւրովք վառելովք ի նոյն ի հին ի վարմից թագաւորացն՝ որք ի մերոյ նախնւոյն ի Հայկայ, որք բուն ոստանն անուանեալ, որք ընդ ժամանակս ժամանակս ժառանգութիւն ի հարանցն ընկալեալ գիւզս և դաստակերոս: Իսկ ասո ուրեմն Պարսից թագաւորութեանն, որպէս լսեմ, այլս ոմանս յարուցեալ գունդս և ոստան անուանեալ. ոչ գիտեմ թէ վառն սպառելոյ ազգին ասաջնոյ, թէ վառն ընդդիմութեան իրիք արդեօք շկապեալ և ի բաց ընկեցեալ զազգն՝ դայլս ի տեղի նոցա յարուցին գունդս՝ անուամբ արքունի: Այլ ասաջինն հաստատ ի զարմից թագաւորացն ասաջնոց. որպէս և այժմ ի Վրաց աշխարհին, որ Սէփէժուլն կոչի: 2) Գիրք Ա, գլ. Ե, էջ 82-83. «Պատմի և այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարման՝ յուղարկէ: Թագաւորապէս զբոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխիւ ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւտոսն զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ: Եւ զոստանն անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս, իբր թագաւորական զարմս»

Սորենացին, ինչպես յերևում է այս հատվածներից, վոստանիկների դասը համարել է «թագավորական դարմ», վոր ծագել է Հայկ նահապետի ու Տիգրան Մեծի քրոջ՝ Տիգրանուհու սերունդներից: Ավելի քան հավանական է, վոր Սորենացին, հիշելով հայ Արշակունիներից ծագած ազգատոհմը, վորին բնակության համար հատկացված են յեղել Հաշտյանք, Աղիովիտ և Ատրերանի գավառները, նույնպես ի նկատի ունի այդ գավառներում գտնվող վոստանիկներին: Բայց այս դեպքում՝ Սորենացու «հավասար» ու «բառ մարդավի» հոգարածանությունը վկայությունը գուցե վերաբերվում է հենց այդ դասին:

Արդ՝ ուղիղ և արդյոք Սորենացու յենթադրությունը, վոր վոստանիկ դասն առաջ է յեկել արքայական հին տոհմերից: Նիկ. Ադոնցն այս խնդրում, ընդհանուր ամամբ, համամիտ է Սորենացու հետ: Նա ևս ընդունում է, վոր վոստանիկները թագավորական սերունդ են, սակայն ծագել են վնչ թե հին թագավորներից, այլ բացառապես Արշակունիներից: Նրա կարծիքով, «ոստանիկ» իր նշանակությամբ համապատասխանում է «արքունի» բառին: Վոստանիկների կապը թագավորական ընտանիքի հետ նույնը յեղած պիտի լինի, ինչ վոր սեպուհների կապը նախարարական ընտանիքների նկատմամբ: Վոստանիկները, ուրեմն, նրա յենթադրությամբ՝ թագավորական տոհմի «սեպուհներն» են: Բացի այդ, հետագայում վոստանիկներ են համարվել նաև նրանք, վորոնք իրանց հատուկ ծառայությունների համար ստացել էին Այրարատում, իրեն պարգև, վորոչ կալվածքներ կամ Արշակունիներից կամ հետո՝ Սասանյան Պարսկաստանից: Արշակունյաց թագավորության անկումից հետո վոստանիկ դասի մեջ են ներմուծվել, Նիկ. Ադոնցի կարծիքով, նաև Արշակունյաց արքունիքում ծառայող ազատ մարդիկ:

Հիմնական կետում, ինչպես տեսնում ենք, Նիկ. Ադոնցը Սորենացու

լուսարանությունը համարում է ճիշտ ու միայն իր կողմից անում է վորոչ լրացումներ:

Այս լուսարանությունը քննության առնելուց առաջ հետաքրքիր է նախ վորոշել «ոստանիկ» գրաբար բառի ստուգաբանությունը: Պարզ է, վոր «ոստանիկ»-ը քերականորեն ծագում է «ոստան» բառից: Նիկ. Ադոնցը կարծում է, վոր «ոստան»-ը նշանակում է արքունիք (ДВОР), բառացի՝ շեք, համապատասխանում է սենյորական curtis dominicalis-ին Արևմուտքում և իբր թե այդպես է անվանվել սերունի կամ նախարարական յուրաքանչյուր յերկրի կենտրոնատեղին («Армения в Эпоху Юстиниана», էջ 463): Իր այս կարծիքը Ն. Ադոնցը չէ հիմնավորել վորեւ տվյալներով կամ վկայություններով, ուստի և շատ դժվար է գուշակել, թե ունեցել է նա արդյոք փաստացի հիմքեր կարեոր այս յեզրակացություն համար: Ըստ յերևույթին, նրա յենթադրությունը հիմնված է միայն Հայկազյան լեզվի նոր բառգրքի վրա, վորը «ոստան» բառի դիմաց նույնպես դրել է «սեամ, գունն արքունի» բացատրությունը: Հավաքած ունենալով հնագույն մեր մատենագրական յերկրից «ոստան» բառի վերաբերյալ գրեթե բոլոր վկայությունները, ինձ աս այժմ չէ հաջողվել գտնել նրանց մեջ վորեւ մի հետք կամ ակնարկ, վորը հաստատեր այդ բառի ստուգաբանական վերոհիշյալ մեկնությունը: Արքունիքի կամ ոռոսական ДВОР բառի իմաստով, վորքան ինձ հայտնի չէ, գործ է ածվել մատենագրական աղբյուրներում վնչ թե «ոստան» բառը, այլ «գունն» կամ «գունն արքունի»:

Իմ կարծիքով, շատ ավելի հիմնավոր ու համոզիչ է «ոստան» բառի նշանակության այն մեկնությունը, վոր տվել է պրոֆ. Հ. Հյուբշմանն իր «Հին հայոց տեղոյ անունները» աշխատության մեջ (թարգմ. Հ. Բ. Պիլեղիկճյանի, Վիեննա 1907, էջ 393-394): Նրա բացատրությամբ՝ «ոստան» բառի ծագումն անպայման պարսկական է. չորրորդ դարում «ոստան» է անվանվել այն յերկիրը կամ քաղաքը, վոր գտնվել է Արշակունի թագավորի (կամ Արշակունյաց թագավորական տան վորեւ իշխանի) իշխանության տակ: «Ոստան» նշանակում էր, ուրեմն, «արքունի կալված, յերկիր, քաղաք»: Այսպիսի արքունական կալվածք է յեղել՝ «բնիկ սեփհական» ու ամենից կարեորը հին ժամանակներից ի վեր, Այրարատ գավառը (և վնչ թե նահանգը). «ոստան» էր, բնականաբար, նաև նույն գավառի ամենից հոյակապ ու նշանավոր քաղաքը, ուր սովորաբար նստում էին թագավորները՝ Արտաշատը և սպա Վաղարշապատը, վոր Հայաստան աշխարհի գլխավոր

* Տե՛ս Փարպ. Բ, գլ. Ե, Տիգրիս 1904, էջ 57. «այլ հանդերձ հաւանելովք ընդ ինքեանս դրամբ եւ ընտանեօր դէմ եղեալ անցանել ի կողմանս իշխանութեանն յունաց ճեպէին». Փարպ. Բ, գլ. Խբ, էջ 75. «զղրան երէցն իշխանին Արծրունեաց Ներշապիոյ՝ զտէր Մուշէ». Կան. Վաչակ. ԺԱ, «Եւ այնօրիկ, որ կոծ դնեն, գտանուտէրն եւ զկուսանս կապեսցեն եւ ի դունն արքունի տարցեն եւ պատուհաս ի վերայ դիցեն» (Կանոնագիրք հայոց, Իրատ. Ա. Ալտեյանի, Թիֆլիս 1914, էջ 195):

ցիներին ավել եր հատուկ հողեր, միանգամայն իրար համապատասխանում են: Ուշադրաբար այս փաստը, վորի մասին հաղորդում են իրարից անկախ և Ագաթանազեղոսը և Փավստոսը, թվում է ինձ, վոր պետք է ընդունել, իրրև հավասար ու ստույգ: Ինքն ըստ ինքյան հասկանալի չե, վոր Տրդատ Մեծը, կամ զուցե նրա հաջորդները, տնտեսապես պետք է ազատվելին գյուղական հողերականներին, և շատ բնական է, վոր հողերականություն վարձատրման ամենահավանական միջոցը կարող եր լինել այդ ժամանակ այն հողաբաշխումը, վոր վկայված է հիշյալ հեղինակների մոտ:

Ագաթանազեղոսի վկայությունը՝ գյուղական հողերականությունը հատկացված են յեղել «չորս չորս հողս երգոյ յամենայն ազարակ տեղիս, իսկ յաւանան եօթն եօթն հողս երգոյ», իսկ Փավստոսի վկայության մեջ հիշատակված են միայն «եւթն» հողերը, վորոնցից Պապ թագավորը հինգը գրավել եր «յարքունիս»: Ագաթանազեղոսի վկայությունը, վոր այս կետում ավելի ընդարձակ է ու վորոշ, ամենայն հավանությունը, պետք է համարվի նաև ավելի ուղիղ: Շատ հավանական է, վոր ազարակ տեղերում, ուր յեկեղեցու սպասավորների ընդհանուր թիվն ավելի պակաս կլիներ, քան ավաններում, հողաբաժինները ևս պետք է լինեյին ավելի քիչ:

Առանձնապես հետաքրքիր է վերոհիշյալ վկայությունների մեջ հողաբաժինների չափի ու մեծություն վորոշումը՝ Ագաթանազեղոսի հատվածում՝ «չորս չորս» կամ «եօթն եօթն հողս երգոյ», իսկ Փավստոսի մոտ՝ ասոնց «երգոյ» միայն «յեւթն հողոյն»:

Արդ՝ ինչ է նշանակում «հող երգոյ»: Վորքան ինձ հայտնի չե, այս դարձվածքը մինչև այժմ դեռ բավարար կերպով լուսաբանված չե: Հունարեն Ագաթանազեղոսում (Paul de Lagarde, Agathangelus und die Akten Gregors von Armenien, Göttingen 1887, էջ 76) «հողս երգոյ» թարգմանված է arouras: Հունարեն aroura բառը նշանակում է վարելահող կամ նաև հողի տարածության վորոշ չափ, ինչպես հունական jugerum-ը կամ գերմանական Hufe-ն: Ուրեմն՝ Ագաթանազեղոսի թարգմանը «հող երգոյ» հասկացել է կամ վարելահողի իմաստով կամ համարել է իրրև վորոշ չափի հողաբաժին: Յերկրորդ յենթադրությունն ավելի հավանական է թվում ինձ, վորովհետև aroura բառը հողաբաժնի հատուկ իր նշանակությամբ կարծես թե ավելի չե համապատասխանում «հող երգոյ» հայերեն բնագրին, քան վարելահողի ընդհանուր իր նշանակությամբ: Հիմնվելով Ագաթանազեղոսի հունարեն թարգմանության վրա, կարելի չե, ուրեմն, յենթադրել, վոր «հողս երգոյ» այն հատուկ հողաբաժիններն են, վոր ավաններում և ազարակներում արվել են «երգերին», այսինքն՝ ծուխերին կամ տներին: Յեթե իմ այս բացատրությունն ընդունելի համարվի, այդ դեպքում վորոշվում է հողաբաժանություն այն հատուկ կարգը, վոր գոյություն է ունեցել հին Հայաստանում Արշակունյաց թագավորության ժամանակ և վորը, հավանաբար, հարատևած պիտի լիներ նաև Արշակունիների հարստության անկումից հետո: Յեթե Խորենացու ակնարկած «ըստ մարգաթուի» հողաբաժինը համապատասխանում եր սուսական подшный

надел-ին, «հող երգոյ» կարող է իր հերթին համապատասխան լինել սուսական подшный надел-ին:

«Հող երգոյ» դարձվածքի այս լուսաբանությունը, թեև սոսկ մի յենթադրություն է, բայց, իմ կարծիքով, շատ ավելի հիմնավոր է, քան մինչ այժմ յեղած մեկնությունները: Լեոն իր «Հայոց պատմության» մեջ (Թիֆլիս 1917, էջ 567) ասում է, վոր «ըստ գյուղական յեկեղեցիները, ինչպես վկայում է Ագաթանազեղոսը, ստացան վնչ միայն ազատ հողերի կտորներ, այլև գյուղացիներին պատկանող հողաբաժիններ յերդերի հաշվով»: Նախ պետք է առարկել, վոր Ագաթանազեղոսի վերոհիշյալ վկայության մեջ, վորի վրա նա հիմնել է իր յեզրակացությունները, վնչ մի խոսք չկա գյուղական յեկեղեցիներին արված ազատ հողերի կտորների մասին, այլ հիշատակված են միայն «հողս երգոյ»: Բացի այդ, զգվար է հասկանալ, թե ինչն է «հողս երգոյ» պետք է նշանակի «գյուղացիներին պատկանող հողաբաժիններ յերդերի հաշվով»: Շատ մութ ու յերկմիտ է այս բացատրությունը: Անհնարին չե, իհարկե, վոր գյուղական յեկեղեցիներին կտորությունը: Անհնարին չե, իհարկե, վոր պատկանել են գյուղաբնակներին, սակայն հարկավոր եր այդ փաստորեն ապացուցել, վորովհետև Ագաթանազեղոսի վկայությունից բնավ այդ չի հետևում: Մութ ու յերկմիտ է հատկապես, վոր իր ստացված են յեղել հողաբաժիններ «յերդերի հաշվով»: Լեոնի բացատրության մեջ, այնուամենայնիվ, նրա հիմնական ու ետևանող գիտողությունը, վոր «հող երգոյ» գործ է ածված գյուղացիական հողաբաժնի իմաստով, մտավորապես համապատասխանում է վերոհիշյալ մեր լուսաբանությունը:

Լեոնի յենթադրությունը միակն է, վոր արժանի եր ուշադրության: Սովորական ըմբռնումն Ագաթանազեղոսի հիշյալ վկայության, վոր հանգիստում է պատմական նորագույն աշխատություններում, ինչպես և նույն համվածի թարգմանությունները, այնքան են մտկերեսային և վայրկեբու, վոր չարժե անգամ նրանց վրա կանգ առնել: Ֆր. Տուրներիզը, որինակ, իր պատմության մեջ (Histoire politique et religieuse de l'Arménie, Paris 1900, էջ 459) «չորս չորս հողս երգոյ» հասկացել է իրրև չորս կալված (quatre fermes), իսկ «եօթն եօթն հողս երգոյ» իրրև յոթը տուն (sept maisons): Այսպիսի կոպիտ սխալներ քիչ չեն բանասիրական և պատմական նորագույն ուսումնասիրություններում, գլխավորապես, յերբ նրանց մեջ հիշատակվում են հայոց ներքին կյանքի վերաբերյալ փաստեր ու յերեվություններ: Քննության առնել այն բոլոր սխալները, վորոնք պարզ աղճատումներ են, կարծում եմ, վոր միանգամայն ավելորդ է:

Յեթե ճիշտ է, վոր «հող երգոյ» վորոշ չափի հողաբաժին է, վորը հատկացվում եր գյուղական ամեն մեկ յերդին, յեվ վոր այդ վկայությամբ վորոշվում է հողաբաժանության հատուկ կարգն ազարակներում և ավաններում, այդ դեպքում Ագաթանազեղոսի վկայությունը յեվս, ինչպես և Խորենացու ակնարկած «նաւասար» և «ըստ մարգաթուի» հողաբաժանությունը,

կարող է հավաստի մի նշան համարվել, վոր հողատիրական համայնական կարգերը գոյություն են ունեցել նաև հին Հայաստանում:

Բացի քննության առնված այս խնդիրներից, Փավստոսի ու Ագաթանգեղոսի վերոհիշյալ հատվածների մեջ կա և մի ուրիշ կարևոր տեղեկություն, վոր արժանի չե հատուկ ուշադրություն: Յեթև Տրդատ թագավորը (կամ թերևս նրա հաջորդներից մեկը) ունեցել է իրավագործությունը ավանների ու ազարակների հողերից վորոշ հողաբաժիններ, հատկապես զյուզական հողերականությունը, շատ պարզ է, վոր նա այդ հողերի վերաբերմամբ ունեցած պիտի լինել գերագույն սեպհականություն իրավունք: Ֆեոդալիզմի շրջանում այդպիսի իրավունք ունեցել են, ինչպես հայտնի չե, սենյորները գյուղական համայնքների հողերի նկատմամբ Արևմտյան Յեվրոպայում: Նորագույն ուսումնասիրությունները հավանական են համարում, վոր համայնական հողատիրությունը ձևերը և կուլտուրը պահպանված են յեղել հաճախ և ֆեոդալիզմի զարգացման ժամանակ, միայն թե նախկին ազատ համայնքները յենթարկվել են սենյորների ու ֆեոդալների իշխանությունը և ստացել են հետզհետե ճորտային համայնքների բնույթը: Արդյոք նույնը տեղի ունեցած չէ նաև հին Հայաստանում: Յեթև ի նկատի առնվի, վոր Արշակունյաց Հայաստանը նախարարական իր կազմակերպությունը կառուցված է յեղել տոնական նախընթաց կյանքի և նախնական փոխհարաբերությունների վրա, կարծում եմ, վոր անհավանական չպիտի լի, վոր այստեղ ևս, ինչպես և Արևմտյան Յեվրոպայում, գյուղական նախկին համայնքները տնտեսապես յենթարկված լինելով թագավորի կամ նախարարների իշխանությունը, կարող է յին միաժամանակ պահպանած լինել համայնական հողատիրության վորոշ կարգերը: Այս վերջին յենթադրությունը յեթև անգամ վիճելի համարվի, առաջին կետը մեր գիտողությունը, վոր հայոց թագավորին պատկանել է գերագույն սեպհականության իրավունք ազարակների ու ավանների հողերի վերաբերմամբ, պարզ ու վորոշ արտահայտված է Ագաթանգեղոսի ու Փավստոսի վկայություններում:

Արդ՝ ինչպես հասկանալ թագավորի այդ իրավունքը: Ուներ արդյոք Տրդատ Մեծը կամ նրա հաջորդներից մեկն այնքան լայն իրավունքներ, վոր կարողանար գյուղական հողերականությունը հողաբաժիններ հատկացնել ամբողջ Հայաստանում՝ թե բուն արքայական և թե նախարարապատկան յերկրներում: Արշակունի թագավորների իրավասությունը սահմանները վորոշելու համար այս հարցի պատասխանն ունի մեծ կարևորություն: Փավստոսի վկայության մեջ պարզ ու հաստատ ասված է, վոր Տրդատ թագավորը ավել էր յեկեղեցիներին հողաբաժիններ «ընդ ամենայն երկիրն հայոց», իսկ Ագաթանգեղոսի ասելով՝ «յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ»: Ագաթանգեղոսի վկայությունը, ինչպես տեսնում ենք, այնքան էլ պարզ չէ, վորովհետեւ «յամենայն իշխանութեան իւրում» կարող է նշանակել թե ամբողջ Հայաստանը և թե թագավորի անմիջական տիրություն տակ գտնվող սեփական յերկիրը: Յեթև ընդունենք Փավստոսի հետ միասին, վոր Տրդատ Մեծի հրամանը սարածվել է ամբողջ Հայաստանի

վրա, այդ դեպքում՝ պետք է ընդունենք, վոր հայ Արշակունիների թագավորական իշխանությունը շատ ավելի ընդարձակ է յեղել, քան, սովորաբար, կարծվում է: Նրանք, ըստ յերևույթին, ունեցած պիտի լինեն սյուզերենական ու միապետական գրեթե նման իրավունքներ, ինչպես և Կարոլինգյան տոհմի վերջին թագավորները և, մանավանդ, Կառլաինգները:

Կարող ենք սակայն վստահիլ Փավստոսի վերոհիշյալ վկայությունը: Պետք է ի նկատի ունենալ, վոր Փավստոսը և Ագաթանգեղոսը, հավանաբար, պատկանել են իրանք հողերական դասին, իսկ հողերականությունը մեծապես շահագրգռված էր, վոր հողաբաժինների սրենքին արվեր տարածական մեկնություն և այդ արտոնությունը պարտավորիլ համարվել Հայաստանի բոլոր շրջաններին համար: Բացի այդ, յեթև ընդունենք նույն իսկ, վոր թանի բոլոր շրջաններին համար: Բացի այդ, յեթև ընդունենք Հայաստանի համար, պավորի այդ կարողությունը արված է յեղել ամբողջ Հայաստանի համար, միանգամայն հնարավոր է, վոր այդ վորոշումը կարող էր կայացած լինել նախարարների ընդհանուր համաձայնությունը հատուկ ժողովում:

Փավստոսի վկայությունը, ինչպես տեսնում ենք, պետք է մտենալ մեծ վերապահությամբ: Հայ Արշակունիների միապետական իշխանության բովանդակությունն ու կուլտուրն այնքան լուրջ ու առաջնակարգ մի հարց է, վոր կարոտ է դեռ մանրաքննին հետազոտության այն բոլոր ցարդերի վ նյութերի ոգնությունը, վորոնք գտնվում են մատենագրական աղբյուրներում: Նույն այս խնդրին յե վերադառնալու յեմ իմ հաջորդ աշխատություններից մեկում:

1004
1732

«ԿԵԱՆՔ, ԱՐԱՐ, ԿԱԼՈՒԱԾ» ՅԵՎ «ՎԻՃԱԿ»:

Վերև մենք յենթադրեցինք, վոր «հող երդոյ», հավանաբար, այն գյուղացիական հողաբաժինն է, վոր Արշակունյաց թագավորության ժամանակ տրվել է ավաններում ու ազարակներում ամեն մեկ յերդին:

Արդ՝ յեթև հողաբաժանությունը գյուղերում գոյություն է ունեցել հին Հայաստանում, վորն է գրաբար լեզվի մեջ այն հատուկ բառը, վորն ունեցել է գյուղացիական հողաբաժնի նշանակություն:

Նիկ. Ադոնցն վերահիշյալ իր աշխատության մեջ (Армения в эпоху Юстиниана, էջ 480) կարծում է, վոր գյուղացիական հողաբաժինն անվանվել է հին հայերի մոտ «կյանք, արար» կամ «կալուած»: Հատկապես «կալուած» բառը նա համապատասխան է համարում ֆեոդալական շրջանի «tenure» բառին:

Նույն այդ բառերը, վոր ունեն գյուղացիական հողաբաժնի իմաստ, գործ են անվել, նրա կարծիքով, նաև իշխանական ու յեկեղեցական կալվածքների համար:

Իր այս կարծիքն ապացույցանելու համար նա մտանացույց է անում Յեկղեղյի պատմության հետևյալ հատվածը. Վենետիկ 1864, էջ 231—232՝ «Եւ եթէ ոք ի հեռի աշխարհ ուրեք գնացեալ իցեն, ունիմ իշխանութիւն



վորականները, վորովհետև, «Գործք Առաքելոցի» վկայությունները, Մատթե-
 վոսն առաքյալ էր ընտրվել վիճակի միջոցով («Գործք Առաքելոց» գլ. Ա,
 23—26): Վոր «վիճակ» բառն ունեցել է հողաբաժնի նշանակություն, այդ
 յերևում է հայոց հնագույն մասնագրություն մի շարք հատվածներից:
 «Վիճակ» բառի տակ Հայկազյան լեզվի նոր բառագրում առաջ է բերված
 Մխիթար Գոշի Յերեմիայի մեկնություններից հետևյալ վկայությունը՝ «վիճակ
 զանգաստանս սովոր են ասել, և մեք սովորեմք զժողովուրդս վիճակ կոչել»: Այս
 վկայությունը պարզ ցույց է տալիս, վոր «վիճակ»-ը, սովորաբար, գործ է
 անվել անգաստանների, այսինքն՝ արտերի կամ վարելահողերի համար:
 Հենց նույն այդ իմաստն ունի «վիճակը» Հին Կտակարանի հայերեն
 թարգմանություն զանազան հատվածներում, որինակ՝ «Եւ ասէ Արիստոզոմ
 ցճառսյա իւր, Գիտէք զվիճակ զեանոյ Յովաբայ, լի զարուվմոտ է առ իս,
 երթայք այրեցէք զնա հրով» (Թագ. Բ, գլ. ԺԳ, 30):

«Վիճակ» բառի գործածությունը գյուղացիական հողաբաժնի համար
 հաճախակի մի յերևույթ է յեղել նաև Արեւմտյան Յեւրոպայի ու Ռուսաս-
 տանի գյուղական համայնքներում, ուր համայնական հողերը յենթարկվել
 են պարբերական վերաբաժանումների: Ֆրանկների Lex Salica որևնադրա-
 կան գրվածքում համայնական հողաբաժնիներն անվանվել են sors, գերմա-
 նական յերկրներում՝ Loos, հին Ռուսաստանում՝ жеребье: Ինչպես տեսնում
 ենք, այդ տերմինները միևնույն նշանակություն ունեն և միանգամայն
 համապատասխանում են հին հայերեն «վիճակ» բառին: Պետք է յենթադրել,
 վոր համայնական հողատիրության նախնական շրջանում հողերի պար-
 բերական վերաբաժանումները կատարվել են վիճակարկության միջոցով, ըստ
 յերևույթին, սովորական մի կարգ է յեղել գյուղական նախնական հա-
 մայնքներում:

Պրոֆ. Բ. Զավախովը վերև հիշված իր աշխատության մեջ («Госуд-
 арственный строй древней Грузии и древней Армении») յենթադրում է,
 վոր հին Հայաստանում և Վրաստանում, ինչպես նաև Արևելքի ուրիշ
 ազգերի մոտ, պետական ու սոցիալական կազմակերպության վերաբերյալ
 տերմինաբանական ծագել է, մեծ մասամբ, համայնական-տոհմական նախորդ
 շրջանից: Որինակ՝ տերրիտորյալ բոլոր միավորները, ամենափոքրից սկսած
 մինչև ամենամեծը, անվանվել են «տուն», «տանուտէր» բառը, վոր սկզբ-
 բուն ունեցել է տոհմապետի իմաստ, հետագայում գործ է անվել գյուղա-
 պետների, նախարարական տոհմերի նահապետների, վարչական պաշտո-
 նյաների և նույն իսկ թագավորի համար:

Ինձ թվում է, վոր համայնական-տոհմական հնագույն շրջանի նման
 տերմիններից է նաև «վիճակ» բառը, վորն ունեցել է սկզբում համայնա-
 կան հողաբաժնի իմաստ, իսկ հետո ստացել է և ուրիշ նշանակություններ:

Ուշագրություն արժանի յե, վոր նույն այս «վիճակ» բառը Հին Կտա-
 կարանի գրաբար թարգմանություն մեջ համապատասխանում է հունարեն
 schoinismos, schoinisma բառերին, վոր նշանակում են՝ չափում լարի, չվանի
 միջոցով կամ լարով, չվանով չափված հողաբաժին:

Նյութից մի փոքր շեղվելով, ավելորդ չեմ համարում այստեղ հիշել,
 վոր Թովմա Արծրունին, նկարագրելով թե ինչպես Բուդայի ժամանակ,
 վասպուրականի նվաճումից հետո, այնտեղ հաստատվում էր մասնատակա-
 ների գաղթականությունը, պատմում է, վոր «սկսան այնուհետև աներկիւղ
 համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն
 համարձակութեամբ սփռել տարածանել ի վերայ երեսաց երկրիս ամենայն
 սողգքն Տաճկաց, որ ելեալ էին զհետ նորա ընտանեօք իւրեանց, և ձեռնա-
 մուխ եղեն բաժանել գերկիրն յինքեանս. և արկանէին վիճակս և լարս
 ձգէին ի վերայ սահմանաց և բնակէին յամուրս աշխարհիս աներկիւղս»
 (Գայր. Գ, գլ. Ե, Ս. Պետերբուրգ 1887, էջ 151—152): Յեթե ի նկատի
 (Գայր. Գ, գլ. Ե, Ս. Պետերբուրգ 1887, էջ 151—152): Յեթե ի նկատի
 մասնակ 852—855 թվերին, իսկ Թովմա Արծրունու պատմությունը գրված
 է, հավանաբար, տասերորդ դարի ետեմական թվականներին, զժվար թե
 է, հավանաբար, տասերորդ դարի ետեմական թվականներին, զժվար թե
 տոհմաց վերապահություն կարելի լինի ընդունել, վոր մասնատական գաղ-
 փականություն մեջ հողաբաժանումն իսկապես տեղի յե ունեցել ճիշտ այն
 յեղանակով, ինչպես վկայում է Թովմա Արծրունին: Թովմա Արծրունու
 յեղանակով, ինչպես վկայում է Թովմա Արծրունին: Թովմա Արծրունու
 պատմության մեջ հողաբաժանումն իսկապես տեղի յե ունեցել ճիշտ այն
 բար, արտահայտված լինել վնչ թե պատմական ու իրական յեղևությունը,
 այլ հողաբաժանություն այն ծանոթ ու սովորական կարգը, վիճակարկությամբ
 ու լաչաձգությամբ, վոր գոյություն է ունեցել նրա ժամանակ Հայաստա-
 նում: Ես այդ չեմ պնդում, բայց և չեմ համարում անհավանական ու ան-
 հնարին:

Համենայն դեպս, վերոհիշյալ փաստը, վոր հունարեն schoinismos և
 schoinisma թարգմանվել են «վիճակ» բառով, կարևոր ու ուշագրավ մի
 սկիզբ է, վոր «վիճակ» բառը կապ է ունեցել հողաբաժանության հետ,
 վորովհետև գործ է անվել, ըստ յերևույթին, այնպիսի հողաբաժանի հա-
 մար, վորոնք չափված և վորոշված են յեղել լարաձգությամբ:

Հիմնվելով այս և մյուս մեր ասածների վրա, ինձ թվում է, կարող
 ենք յեզրակացնել, վոր հին Հայաստանում գյուղացիական հողաբաժնիներն
 անվանվել են վնչ թե «կեանք», արար, կարուած», այլ «վիճակ», վորը, ինչ-
 պես տեսնք, իր նշանակությամբ ու գործածությամբ համապատասխա-
 նում է sors, Loos և жеребье բառերին: Այս վերջին բառերի նման «վի-
 ճակը» էս, հավանաբար, հատուկ մի տերմին է, վոր գործ է անվել հա-
 մայնական հողատիրության միջավայրում:

Իսկ յեթե այդ այդպես է, ուրեմն, մեր յենթադրությունը համայ-
 նական հողատիրության գոյության մասին հին Հայաստանում հաստատ-
 վում է վնչ միայն վերև ասած բերված վկայություններով, այլ և լեզվա-
 կան այս նոր գիտություններով:

«ՌԱՄԻԿ» ՅԵՎ «ՌԱՄԻԿ ՇԻՆԱԿԱՆ»:

«Ռամիկ» բառի նշանակությունը, թեև բանասերներից շատերը հա-
 մարել են պարզ ու հասկանալի, սակայն սովորական այդ կարծիքը ճիշտ

ժողովրդի ամբողջ բազմութունը, վոր չեր պատկանում ազնվական կամ հոգեվորական դասերին: Նույն բանի տակ, շատ պարզ է, վոր արդեն իսկ հասկացվում էր և շինականութունը: Վոր շինականները «ոամիկ մարդիկ» էլին, այդ պարզ յերևում է մի քանի վկայութուններից, վորոնց մեջ նրանց «ոամիկ» լինելն առանձնապես շեշտված է: Որինակ՝ Փավստոս, Գլ. Գ, Գլ. Խա, Վենետիկ 1832, էջ 54. «Ապա առաւել ժողովեցան ի մի ժողով միարանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք, մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, գորագլուխք, դատաւորք, պետք, իշխանք. բայց ի գորավարացն, այլ և ի շինականաց անգամ ոամիկ մարդկանն». Սորեն. Գ, Գլ. Է, Տփղիս 1913, էջ 263. «և զորդին Բակրոյ գէշէայ ձերբակալ արարեալ հանդերձ երկաթի կապանօք առաքէ Սոսրովու. և զգաւառս իշխանութեան նորա սրով դառի յանխնայ, ոչ միայն զմարտիկս, այլ և զոամիկ շինականս»:

Շինականների «ոամիկ» լինելը, ինչպես տեսնում ենք, միանգամայն անվիճելի յէ: Բայց կարելի՞ յէ արդյոք դրանից հետեցնել, ինչպես այդ անում է պրոֆ. Ն. Մառը, վոր «ոամիկ» բառը և «շինականը» համանիշներ են և գործ են անվել սոցիալական միեկունչն դասի համար: Այս յեզրակացութունը, վոր սովորական է ու ընդհանուր բանասիրական ու պատմական նաև ուրիշ աշխատութուններում, թվում է ինձ, վոր հիմնավոր չէ: «Ռամիկ» հին Հայաստանում կոչվել են վոչ միայն շինականները, այլ և քաղաքների բնակչութան ստորին խավերը: Ազգայնագետները պատմում են, վոր Վահան Մամիկոնյանը, ստանալով Գլխին քաղաքում իր մարզպանութան հրովարտակը, գնում է իսկույն յեկեղեցի: «Առեալ զհրովարտակն, առում է Փարպեցին, — խնդրէր վաղվաղակի անդրուվար՝ երթալ ի տունն Աստուծոյ: Եւ լուեալ զայս մարդկանն որ ի քաղաքին էին, զրոհ տուեալ առ հասարակ ամենայն մարդոյ, նախարարաց և ազատաց, ոստանկաց և ոամկաց, արանց և կանանց, ձերոց և տղայոց, այլ և հարսուէք անգամ յոռագաստաց, մոռացեալ առ վայր մի առ խնդին զամօթ հարսնութեան զիմեալ ընթանային յեկեղեցին» (Գր. Գ, Գլ. ԳԹ, Տփղիս 1904, էջ 178): «Ռամիկները», վոր հիշատակված են այս հատվածում, վոչ թե բացառապես շինականներն են, այլ քաղաքի բնակչութան ստորին խավերը՝ արհեստավորները, թերևս նաև մանր առևտրականները ևս, վորոնք շինականներից միանգամայն տարբեր՝ սոցիալական հատուկ դասակարգեր էլին: Նույն այս նշանակութունն ունի «ոամիկը» նաև Հովհաննես կաթողիկոսի պատմութան հետևյալ հատվածում. «Չայտու ժամանակաւ անագին իմն յեղակարթում սասանուց և սարսափուց և զորդուց և կործանուց վրնակչօք քաղաքին զեղեալ, հիմն ի վեր տտպալէր: Վասն զի առ հասարակ ի վայր փուզեալ զպատուար պարսպացն և զապարանս զխաւորացն և զտունս ոամկաց՝ իբրև զերիզուտ վայրս առապարաց յական թօթափել տեսնէր» (Թիֆլիս 1912, էջ 162): Այս վկայութան մեջ ևս խոսքը, անշուշտ, քաղաքային հասարակ ժողովրդի տները մասին և և վոչ շինականների:

Մեր այս քննութունից, ինչպես և Հյուբըմանի վերոնշյալ ստուգարանական մեկնութունից, կարծում եմ, կարելի յէ հետեցնել, վոր «ոամիկ» բառը սկզբնական իր նշանակութամբ մոտավորապես համապատասխան պիտի լիներ գերմաներեն Menge կամ Masse և ուսերեն толпа, масса բաներին, վոր հաճախ գործ են անվել հասարակ, խաժամուտ ժողովրդի իմաստով: Ուշադրութան արժանի յէ այդ տեսակետից, վոր վոսկեգարյան շրջանի հայերեն թարգմանութուններում «ոամիկ» բառը մեծ մասամբ համապատասխանում է հունարեն δῆμος և demotēs բաներին, վորոնք հետմապատասխանում են հունարեն δῆμος և demotēs բաներին, վորոնք հետմապատասխանում են հունարեն δῆμος և demotēs բաներին, վորոնք հետմապատասխանում են հունարեն δῆμος և demotēs բաներին, վորոնք հետմապատասխանում են հունարեն δῆμος և demotēs բաներին, վորոնք հետմապատասխանում են հունարեն δῆμος և demotēs բաներին:

Ուրեմն՝ ինչպես տեսնում ենք, «ոամիկը» վոչ թե համանիշ է «շինական» բառին, այլ նրա նշանակութունն ավելի ընդարձակ է ու ընդհանուր: «Ռամիկ» կարող էլին անվանվել վոչ միայն «շինականները» այլ և, ընդհանրապես, ժողովրդի ամբողջ բազմութունը, լինել նա գյուղացի թե քաղաքացի, յեթե նա չեր պատկանում ազնվական կամ հոգևորական դասերին: Վորովհետև հին Հայաստանը յերկրագործական ու գյուղացիական յերկրի կազմում էլին «շինականները»: Անհավանական չէ, վոր այդ բաների մերձեցման ու նույնացման գլխավոր առիթներից մեկը կարող էր լինել նաև հենց այս վերջին հանգամանքը:

«ՇՄՈՒԱՅՈՒԹԻՒՆ» ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՅԵՎ «Ի ՀԱՐԿԻ ՇՄՈՒԱՅՈՒԹԻՒՆ»:

Շինականների սոցիալական դրութան մասին պատմական ու մատենագրական աղբյուրների տեղեկութունները թեև շատ քիչ են և անորոշ, բայց այդ տեղեկութուններից իսկ յերևում է, վոր շինականները, լինելով հին Հայաստանում առանձին դաս (состояние, Stand, état), կազմել են յերկրի գլխավոր հարկատու ու յգլխ:

Աղբյուրների մեջ շեշտվում է հաճախ, վոր Տրդատ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը հայոց յեկեղեցին համարել են «ազատաց տոհմի» կարգում: Յեկեղեցու այդ «ազատութիւնը», վոր հակադրվում է շինականների «ճառագայտութեան», հասկացվել է, պարզապես, իբրև ազատութուն այն հարկերից, վոր պարտավոր էլին տալ շինականները: Հոգևորականութան ու շինականութան սոցիալական դրութան տնտեսական այդ կողմը միանգամայն պարզ յերևում է մատենագրական հետևյալ վկայութուններից:

Յեղիշէ պատմագիրը Պարսից Հազկերտ Բ. թագավորի մասին պատմում է, վոր նա «առաջին, զազատութիւն եկեղեցւոյն արկանէր ի ճառագայտութիւն. երկրորդ, միայնակեաց քրիստոնեայք՝ որ բնակեալ էին ի վանոցայն, ընդ նովին աշխարագրուէալէր. երրորդ, զհարկ աշխարհին առաւել յայտնաբացոյց» (Վենետիկ 1864, էջ 39): «Եւ զայս ամենայն առնէր. — շարունակում է Յեղիշեն — թերևս զմիաբանութիւնն քակեցէ, և զուխան եկեղեցւոյն»:

յութիւն»-ը, լինելով շինականները զլիսավոր պարտականութիւնը, տարբերվել է նախարարները ու ազատները «ծառայութիւն»-ից հատկապես նրանով, վոր նրա սոցիալ-տնտեսական հիմքը կազմել է հարկաավութիւնը, վորից ազատ են յեղել ազնւական արտոնյալ դասերը:

«Ի հարկի ծառայութիւն»-ը բացի Փալատոսից հիշված և նաև Մովսէս Խորենացու ու Ղազար Փարպեցու պատմութիւններում: Խորենացին, նկարագրելով Արամ նահապետի հաղթական կռիւները մեղացիները ու ու ասորեստացիները դեմ, վկայում է, վոր սա մեղացիները, վորոնց առաջնորդն էր Նյուբար Մագիսը, «գաշխարհն նորա մինչև ի լեւոնն անուանեալ Չարասպ՝ ի ծառայութեան հարկի կալու մինչև ցթագաւորութիւնն Նինոսի ի վերայ Ասորեստանի և Նինուէի» (Գիրք Ա, գլ. 34, Տիգրիս 1913, էջ 44): Իսկ ասորեստացիները, զարձայլ Խորենացու ասելով «զմեծ մասն գաշտացն Ասորեստանի կալու ի ծառայութեան հարկի Արամ քաղում ժամանակս» (Գիրք Ա, գլ. 34, էջ 45): Այս վկայութիւնների մեջ անձնավորութիւնները և պատմական անցքերը կարող են, իհարկէ, վիճել լինել ու առասպելական, սակայն «Ի հարկի ծառայութիւն»-ը, վոր վերագրված է նվաճված յերկրներին, հին Հայաստանի սոցիալական կյանքի նույն իրողութիւնն է և սոցիալական միեւնույն տերմինը, վոր գործ էր անում նաև Փալատոսի վերոհիշյալ հատվածներում:

«Ի հարկի» ծառայութիւն մասին շատ հետաքրքիր է Ղազար Փարպեցու վկայութիւնը, վորը սակայն վերաբերվում է վնչ թէ Պարսկական Հայաստանին, այլ Պարսկական Ասորեստանի Շափուլ կոչված գավառին: Խոսելով Արբանտնա Խոստովանողի ու Խորեն յերեցի մասին, Փարպեցին պատմում է, վոր Պարսից Հաղկերտ Բ. թագավորը (439—457 թ. հ. Բր.) հրամայում է, վոր նրանք հանձն անեն պատվել կրակը, իսկ յեթէ վնչ հրամայում է, վոր նրանք հանձն անեն պատվել կրակը, իսկ յեթէ վնչ «պատուհաս կրեսցին խեղութեամբ, և երթեալ յԱսորեստան մշակութիւն պարսցեն ընդ արքունի մշական, և ի հարկի կայցեն մինչև ցվախճան արեբանց» (Գր. Բ, գլ. 3ը, Տիգրիս 1904, էջ 105): Վորովհետև սրանք համառում են և չեն կատարում թագավորի հրամանը, ուստի և, ինչպես վկայում է Փարպեցին, «կարեալ զերկոցունց զականջոն՝ ետուն տանել յԱսորեստան, ի գաւառն որ անուանեալ կոչի Շափուլ, կալ անդ նոցա ի հարկի և առնել մշակութիւն արքունի» (Գր. Բ, գլ. 3ը, էջ 106): Այստեղ Ասորեստանում Խորեն յերեցը մեռնում է մի քանի տարուց հետո, իսկ Արբանտնա յերեցը տեղացի քրիստոնյաները ոգնութեամբ ազատվում է ու վերագաղտնում Հայաստան: Փարպեցու վկայութիւն մեջ կարծուր է առանձնազատում Հայաստան: Փարպեցու վկայութիւն մեջ կարծուր է առանձնազատում Հայաստան: Փարպեցու վկայութիւն մեջ կարծուր է առանձնազատում Հայաստան: Փարպեցու վկայութիւն մեջ կարծուր է առանձնազատում Հայաստան:

բանց և զարարս փոխանակ ընդ հարկի նորա գրեցին յարքունիս ցվախճան նորա, և կատարեցին զկարգեալն անվեհեր յաղագս նորա» (Գր. Բ, գլ. 3ը, էջ 106): Անհավանական չի լինի յենթադրել, վոր հավատացյալները այս յերաշխարհութիւնն ունեցել և համերաշխիքի բնույթ (ЕРУТОВАЯ ПОРЫКА): Ուրեմն՝ ինչպես տեսնում ենք, Արբանտնա Խոստովանողը, լինելով Ասորեստանում «Ի հարկի» ծառայութիւն մեջ, գտնվել է հարկատու այնպիսի վիճակում, վորին կապված է յեղել մինչև ցմաճ և վորից ազատվելու համար անհրաժեշտ է յեղել հավատացյալ բնակչութիւն համերաշխիքն այն հարկերի համար, վոր նրանից ստացվելու էր մինչև նրա վախճանը:

Փարպեցու վկայութիւնը վերաբերվում է Ասորեստանում գտնվող «արքունի մշակներին» և պարզ չէ, թէ արդյոք այս «արքունի մշակները» սովորական արքունի գյուղացիներն էին, թէ աքսորվածների հատուկ մի խումբ: Վերջին յենթադրութիւնն ինձ թվում է միանգամայն անհավանական: Փարպեցու վկայութիւն բովանդակութիւնից յերևում է, վոր «արքունի մշակը» անվան տակ պետք է հասկանալ Ասորեստանի Շափուլ գավառի արքունի գյուղացիներին, վորոնց զլիսավոր պարտականութիւնը յեղել է «Ի հարկի» ծառայութիւնը:

Արդ՝ ամենակարեւորը նույն վկայութիւն մեջ այն է, վոր հարկատու այդ զրութիւնից անկարելի չէ յեղել կամովին դուրս գալ, այլ անհրաժեշտ է յեղել նախապես յերաշխարհութիւն արքունի բոլոր հարկերի վճարումը: Կարեւոր է յեղել նախապես յերաշխարհութիւն արքունի գյուղացիներին թույլատրված լինել յե, ուրեմն, յենթադրել, վոր արքունի գյուղացիներին թույլատրված է յեղել հարկային պարտականութիւնները նման է յեղել արևմտյան կոտեսակետից նրանց իրավական դրութիւնը վերաբերվում է Պարսկոնները դրութիւնը: Թէև Փարպեցու վկայութիւնը վերաբերվում է Պարսկական Ասորեստանին, բայց, ինչպես կը տեսնենք, հին Հայաստանում ևս կական Ասորեստանին, բայց, ինչպես կը տեսնենք, հին Հայաստանում ևս կական Ասորեստանին, բայց, ինչպես կը տեսնենք, հին Հայաստանում ևս կական Ասորեստանին:

Սոցիալական ու տնտեսական ներքին կարգերի համեմատումը Հայաստանում և Պարսկաստանում ինքնին հետաքրքիր մի խնդիր է, վորը, իհարկէ, դեռ կարող է հիմնավոր ու լուրջ ուսումնասիրութիւն:

նշանակութիւնն նաև հին Հայաստանի համար: Դժբախտաբար, շինական դասի իրավական դրութիւն խնդիրը, թե Պարթևական և թե Սասանյան Պարսկաստանում, նույնքան անորոշ և ու մութ, ինչպէս և հին Հայաստանում: Իրական արդյունքներ ստացվել են առ այժմ, գլխավորապէս, լեզվագիտութեան մեջ, և նորագույն այդ ուսումնասիրութեան ներքին յերևում է, վոր հին հայերենում գյուղացիութեան վերաբերյալ սոցիալական ամենակարևոր տեղանիւններն իսկ, ինչպէս՝ շեն, շինական, օսմիկ, անագատ և այլն, փոխառութիւններ են պարսկերէն լեզվէջ:

«ԱՆԱԶԱՍՔ», «ՓԱԻԶՈՂՔ Ի ԺԱՌԱՆԳՈՒԹԵՆԷ»:

Պրոֆ. Ի. Զավախովը, քննութեան առնելով շինականների իրավական դրութեան խնդիրը, հանգել է այն յեզրակացութեան, վոր շինականներն ազատ չեն յեղել, այլ ստորադրված են յեղել ազնվականներին: Նրա յեզրակացութեան գլխավոր ու միակ հիմքն այն է, վոր մասենազրական ազբյուրներում շինականները հակադրվել են ազատներին (Государственный строй древней Грузии и древней Армении, էջ 134):

Իմ կարծիքով, Զավախովի մասնացույց արած միակ այս ազացույցն այժման էլ ամուր ու հաստատուն չէ, ինչպէս ինքը կարծում է: Միանգամայն ուղիւ է, վոր «շինականները» հին Հայաստանում յեղել են «ազատներին» հակադիր առանձին դաս և նրանք նույն իսկ ազբյուրներում կոչվել են հաճախ «անագատներ», սակայն այդ փաստն ինքնին դեռևս բավական են հաճախ անագատներ, յակայն այդ փաստն ինքնին դեռևս բավական չէ, վոր նրանց կարելի լինի համարել վնչ ազատ այդ բառի այժմյան իրավական իմաստով: Հին Ռուսաստանում, որինակ, «ամերդները» (смерды) վորոնք նույնպէս, իբրև ստրկներ դաս, հակադրվել են ազնվական ավելի վարձը դասերին և յեղել են յերկրի գլխավոր հարկատու ու յժը, իրավական իրանց գրութեամբ յեղել են ազատ: Վորպէս զի կարելի լինի ցույց տալ շինականների անագատ լինելն այդ բառի այժմյան հասկացողութեամբ, անհրաժեշտ է, իմ կարծիքով, ուսումնասիրել նրանց իրավական դրութեան վերաբերյալ նյութերը շատ ավելի մանրագնային կերպով, քան այդ արել է Ի. Զավախովը:

Հիմնական խնդիրը, վոր հարկավոր է դեռ լուծել շինականներին վերաբերմամբ այն է, թե արդյոք նրանք յեղել են կազմված հողի հետ, ինչպէս միջնադարյան ճորտերը, և արդյոք նրանց կախումը կազմվածատեր ազնվական դասից անտեսակամ է յեղել միայն, թե նաև անձնական: Մատենական գրական ազբյուրները, գժբախտաբար, հնարավորութեան չեն առ ինքնութեան առնել ու լուսաբանել այդ խնդիրը հանգամանորեն, իբր քսր թուր մանրամասնութեան հարկում, ինչպէս այդ արված է նորագույն ուսումնասիրութեան հարկում Բյուզանդիայի, Արևիմտյան Յեզբուրչի և Ռուսաստանի ընթացիկութեան նկատմամբ: Արդյուրների մեջ կան միայն կոզմակի մի քանի ցուցումներ, վորոնցից, իմ կարծիքով, կարելի չէ հետեւցնել, վոր

Սասանյան Պարսկաստանի տիրապետութեան շրջանում հին Հայաստանի շինականութեանը ևս գտնվել է, ընդհանուր ամամբ, ճորտանման վիճակում:

Այդ ցուցումներից առնելից ուշադրաւ և Իվինի ժողովի հետեւյալ կանոնը. «Յորժամ ազատը զիւրեանց զերդ և զմարդ բաժանեն՝ յուրք հարակնութեամբ առնեն, զժառանգուորս և կեղեցւոյ ջանան ի ծառայութիւն և ի սարկութիւն արկանել» (Կանոնք Դուռայ, Վարդաշատ 1905, թիւն և ի սարկութիւն արկանել) (Կանոնք Դուռայ, Վարդաշատ 1905, էջ 19): Յերդերի ու մարդկանց այս բաժանումը, թվում է ինձ, վոր կարող է ընդունվել իբրև ուշադրաւ մի ակնարկ, վոր կազմածատեր ազատների գյուղացիները, համարվելով սրանց հատուկ գույքը, պետք է վոր լինել ժառանգական բաժանման առարկա, հավանական է յենթադրել, վոր նույն այդ գույքը, ըստ յերեւոյթի, կարելի չէ յեղել նաև գնել, վաճառել, ընծայել, կտակել և այլն: Յեթև ազատների գյուղացիները կազմված չլինելու հողի հետ և ճորտանման կախում չունենալին իրանց տերերից, անհակնաւրի կլինա թե յերդերի ու մարդկանց վերոնիշյալ բաժանումը և թե, մանավանդ, ազատների դիրքը յեղեկացու ժառանգավորների հանդեպ, վորոնց նրանք նույնպէս աշխատել են «արկանել ի ծառայութիւն և ի սարկութիւն»:

Ուշադրութեան արժանի չէ նաև Մովսես Կաղանկատվացու վկայութեանը Արվանից Վաչե արքայի մասին: Այս արքան, հրաժարվելով գահից, խնդրում է Պարսից Պերոզ թագավորից տալ իրան սեպհական իր բաժինը, վոր ստացել էր հորից: «Իսկ սա հաճեցաւ, — պատմում է Կաղանկատվացին, — միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, զոր ի հորէն էր ստեալ հազար երդ, առ զայն ի թագաւորէն և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ («Հատ. Ա, գլ. Ժ, հրատ. Մ. էջ 14»): Այս վկայութեան մեջ ևս «երդերը», ուրեմն և նրանց մեջ ապրող յերդավորները, համարվում են հատուկ գույք, վոր Վաչեն իբրև սեպհական բաժին ստացել էր իր հորից:

Իմ կարծիքով, շինականներին իրավական դրութեանը կարող է վերաբերվել նաև Ազատ Փարսեցու հետեւյալ վկայութեանը, վոր գտնվում է նրա վահան Մամիկոնյանին դրած «Թուղթի» մեջ. «Արդ՝ զառաջին կելոյն նրա վահան Մամիկոնյանին դրած «Թուղթի» մեջ. «Արդ՝ զառաջին կելոյն իմոյ զվարս տէր Ներսէն և Հրահատ Կամսարական դիտեն. զՍիւնեացն՝ յայնս աշխարհիւն աշխարհիւն: Եւ զու հայց կելալ խնդրել զիս, և ուրախաւ կպիտակուտն աշխարհիւն: Եւ զու հայց կելալ խնդրել զիս, և զտեալ յաշխարհիւն յայնմ՝ աճեր ի տուն, ոչ իբրև գաղթատ գոք ի կազմածէն և ի մանկուսոյն, և ոչ իբրև օտար գոք ի քէն և կամ զմատայ ուրուք. քանզի պարեգօտաւորք ազատեալ են ի Քրիստոս: Իսկ որ գատոյցն զիս պարեգօտիւք ի ծառայութեան և ազատութեան եղև մեզ առիթ, տէր Արան՝ քո տեառն քեռի էր» (Տիգրիս 1904, էջ 188): Կարելի չէ այս վկայութեանը, թվում է ինձ, վոր սխալ է մեկնված Գ. Զարբանալյանի «Հայկական հին դրութեան պատմութեան» մեջ: Հիմնվելով այս հատվածի վրա, Գ. Զարբանալյանը հնարավոր է համարել յեզրակացնելու, վոր Ազատը

թյան մեջ, դատարանի վճռով յենթարկվել են մտրմանական պատիժների, վորոնցից ազատ են յեղել «ազատները»: Պարզ ու վորոշ վկայված և այդ Շահապիրի վանի ժողովի կանոններում: Պոռնիկոթյան համար սահմանված ազատ Շահապիրի վանի ժողովի Գ. կանոնում հետևյալ պատիժը. «եթէ ազատ է և գան չէ մարթ հարկանել, ի տուգանն և յապաշխարութիւնն յաւելցեն. մ զրամ կարօտելոց, ը տարի ապաշխարութիւն. և զպղծութիւնն այլ մի ևս զործեսցէ. ապա մտցէ յեկեղեցի և ընդ ընկերս խառնիցի: Ապա թէ շինական է, գան յոլով արբցէ, և զրամ տուգան տացէ յեկեղեցի և յաղքատս բաշխեսցեն, և տարի մի ի պղծութիւնն հետացեալ մտցէ յեկեղեցի և ընդ ընկերս խառնեսցի» (Կանոնագիրք Հայոց, հրատար. Արսեն Արսեւյանի, Թիֆլիս 1914, էջ 63):*

Շինականների ճորտանման զրուծյունը հավանական համարելով Մարզպանական Հայաստանում, անհրաժեշտ է, ի հարկե, գոնե մտաւոր կերպով վորոշել նրանց իրավական այդ զրուծյան բովանդակությունը և առանձնահատկությունները: Պետք է ասել, վոր ճորտ (крепостной, colonus, villanus, hörig, leibeigen) և ճորտություն (крепостничество, villenagium, Hörigkeit, Leibeigenschaft) բառերը բովանական ճապարակ ու խառնաշփոթ գաղափարներ են, վորոնց տակ հասկացվել են յերբեմն տնտեսական ու իրավական իրարից խիստ տարբեր զրուծյուններ: ճորտությունը հաճախ այնքան մեղմ է յեղել, վոր շատ քիչ է տարբերվել ազատ գյուղացիների զրուծյունից, իսկ յերբեմն այնքան ծանր է յեղել, վոր շատ մոտ է յեղել կատարյալ ստրկություն: ճորտերի առաջին տեսակին պատկանում է յին, որինակ, Բյուզանդական կայսրության կոլոնները (coloni), վորոնք անձնապես ազատ էին, բայց կապված էին հողին (glebae, terrae adscripti, servi terrae ipsius) և չունեին տեղափոխման իրավունք, իսկ յերկրորդ տեսակին պատկանում էին սուսական крепостной-ները և գերմանական leibeigen կոչված ճորտերը, վորոնց զրուծյունը խիստ ծանր է յեղել, մասնավոր, XVIII -րդ դարում:

Հիմնական պատճառն այս գանազանության, ինչպես ցույց են տվել նորագույն ուսումնասիրությունները, յեղել է, զլիսավորապես, տնտեսական Գերմանական գիտնական Գեորգ Կնապպի յենթազրուծյամբ, ճորտական գյուղացիության զրուծյունը սեծապես կախված է յեղել ազատային յերկու իրարից տարբեր սիստեմներից, վոր նա անվանում է Grundherrschaft և Gutsherrschaft**: Grundherrschaft է կոչվում սենյորալ կազմակերպությունը, յերբ սենյորը ստանում է իր գյուղացիներից գանազան տուրքեր ու հարկեր, բայց ինքը չունի իր սեպհական մեծ տնտեսությունը, իսկ Gutsherrschaft յերբ սենյորը թեև նույնպես ստանում է իր գյու-

* Համեմատն նայել կանոն Թ, էջ 67:
** Տե՛ս Кулишер I. M., Лекции по истории экономического быта Западной Европы, Петроград 1918, էջ 281, նաև Georg Knapp, Bauernbefreiung 1887, B, I, Einleitung:

ղացիներից տուրքեր ու հարկեր, այլ նրա յեկամուտի զլիսավոր աղբյուրը վնջ թե այդ վճարումներն են; այլ նրա ինքնուրույն խոշոր տնտեսությունը, վորը նա սպառնում ու մշակում է ճորտական իր գյուղացիների պարտադիր աշխատանքով: Ազգանույն անաշխին կարգի յերկրներ էյին Ֆրանսիան և արևմտյան Գերմանիան, իսկ յերկրորդ կարգի՝ արևելյան Գերմանիան, Լեհաստանը և Ռուսաստանը: Յենթազրուծյունը ճորտական գյուղացիության իրական զրուծյան վրա ունեցել է իր վորոշ ակնբեր սպառնություններ: Յեկրոպայի արևմտյան յերկրներում ճորտական գյուղացիության իրավական ու տնտեսական զրուծյունը համեմատաբար ավելի մեղմ է յեղել, քան Յեկրոպայի արևելյան յերկրներում, ուր միևնույն գյուղացիությունը վնջ միայն վճարել է գանազան տուրքեր ու հարկեր, այլ և իր ամբողջ բնականիքով ու ամենամեծ չափերով շահագործվել է նաև իր բն ձրի աշխատող ույժ:

Գիտական այս նոր տեսությունն ազգարային յերկու տարբեր սիստեմի մասին, վորոնցով մեծապես պայմանավորված է յեղել ճորտության տնտեսական ու իրավական զրուծյունը, ունի նշանակություն թե հին Հայաստանի և թե, ընդհանրապես, ամեն մի յերկրի համար, ուր գյուծյուն է ունեցել ճորտական գյուղացիություն՝ ստորազրուծ կալվածատեր ազնվական դասի իշխանությանը:

Վերոհիշյալ բաժանման տեսակետից, թվում է ինձ, վոր Մարզպանական Հայաստանի կալվածատիրական սիստեմը համապատասխան պետք է ընդունել Grundherrschaft կոչված սենյորալ կազմակերպությանը: Պատմական աղբյուրներից բնավ չի յերևում, վոր նախարարներն իրանք ևս յեղած լինեյին գյուղատնտեսներ և ունեցած լինեյին սեպհական ու ինքնուրույն խոշոր տնտեսություններ: Նրանց յեկամուտի զլիսավոր աղբյուրը կազմել են, հավանաբար, շինականներից ստացված տուրքերը և հարկերը: Ամեն անգամ յերբ մատենագրական աղբյուրների մեջ խոսք է լինում նախարարների ու շինականների փոխարարության մասին, հիշվում է միշտ յարարների ու շինականների փոխարարությանը և նախարարների հարկապահանջությունը: Փավստոս պատմագիրը, խոսելով Աշտիշատի ժողովում սահմանված կանոնների մասին, առաջ է բերում, որինակ, ներսես կաթողիկոսի հետևյալ պատվերը. «Եւ ամենայն աշխարհին պատուիրէր, և գլխովին թագաւորին, առ հասարակ ամենայն մեծամեծացն, և ամենեցուն՝ որ ոք ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն, գութ ունելով ընդ իւրեանց ծառայս և ընդ կրտսերս և ընդ աշակերտս, և սիրել իրրեւ զընտանիս, և մի անարժանս և աւելի տարապայմանս հարկօք նեղել քան զշափն. յուշ առնելով, զի և նոցա աէր զոյ յերկինս: Սոյնպես և ծառայից պատուիրէր՝ կալ յարդարն հնազանդութեան իւրեանց տերանց, զի ի տեսնել լինիցի նոցա վարձք» (Վեհաժող 1832, էջ 77—78): Սահակ կաթողիկոսի ԼԸ կանոնում վանքերի մասին սոված է, վոր «ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց սահմանս ընկալու և անդս, վոր «ազատ յամենայն հարկապահանջ յուրաքանչյուր սրբութեան եկեղեցւոյ» (Կանոնա-

ձին դաս, իրանց գրության ճորտանման գծերով կարող են մտավորապես համեմատվել Բյուզանդական կայսրության կոլոնների հետ, վորոնք նույնպես, ինչպես հայանի յե*, չեն ունեցել անձնական կախում իրանց տերերից:

Հիմնվելով վերև ստաջ բերված վկայությունների ու ակնարկների վրա, ես հավանական եմ համարում, վոր շինականները Սասանյան Հայաստանում բյուզանդական կոլոնների նման կապված են յեղել իրանց հողին ու հարկատու ծառայությունը: Կոլոնների նման նրանց ես արգելված է յեղել դուրս գալ ինքնակամ իրանց գասից և մանկ ուրիշ գասերի մեջ: Հայանի յե, վոր կոլոնները կարող էյին ընդունվել տեղական յեղեղեցիների կղերականություն մեջ իրանց տերերի հաճությունը: Վերև մենք տեսանք, վոր Ղազար Փարպեցին ես, իբրև շինական, հագեորական եր գասել Տեր Աղանի համաձայնությունը:

Կոլոնների մասին հայանի յե նույնպես, վոր նրանք իրավունք չեն ունեցել վարել վորևե պետական պաշտոն՝ նույն իսկ ստորին կարգի: Իմ կարծիքով, նույնը յեղած պիտի լիներ նաև Հայաստանում: Շահապիվանի ժողովի ժգ-րդ կանոնում ասված է, վոր «տաանց դառաի և պիտակոպոսին չիշխէ լինել եպիսկոպոս կամ երէց, կամ ազատ ոք դասաուրաց, և կամ շինական վասն առաջնորդս կարգելոյ և հովիւս պատրաստելոյ յեկեղեցւոյ, և ժողովրդապետս և օրէնսդիրս կացուցանելոյ» (Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղաճյանի, էջ 76): Այս հատվածում, ինչպես տեսնում ենք, չիշխում են իբրև դատավորներ հատկապես ազատները: Միանգամայն հավանական է, վոր շինականներին արգելված պիտի լիներ վարել վոչ միայն դատավորական, այլ և ուրիշ պետական պաշտոններ:

Շինական գասի իրավական դրությունը Մարզպանական Հայաստանում, ինչպես տեսնում ենք, այնքան ել մութ ու անորոշ չէ, ինչպես մինչև այժմ կարծվել է: Փաստական մեր դիտողություններից պարզ յերևում է, վոր պատմական այս շրջանում գոյություն չէր ունեցել Հայաստանում այն ծանր ստրկանման ճորտությունը, վոր համեմատաբար նոր ժամանակներում ասանձնահատուկ է յեղել, գլխավորապես, արևելյան Յեվրոպային: Շինականների «անազատ» կոչվելը չպետք է հասկանալ այն իմաստով, իբր թե նրանք անձնական կախում են ունեցել իրանց տերերից և յեղել են անձնապես իրավագուրկ: Նրանք «անազատ» են անվանվել, իբրև ազատներից տարբեր ու ազատներին հակադիր մի գաս:

«Անազատ», ուրեմն, նշանակում է «ազատների» գասին չպատկանող: Բացի շինականներից «անազատ» կարող եր կոչվել, հավանաբար, նաև


քաղաքների բնակչության այն ևամիկ մասը, վորը չէր պատկանում «ազատների» գասին: Յեթե ապագայում հնարավոր լինի պարզել, վոր հին Հայաստանում կիսաազատ շինականներից դուրս յեղել են նաև ազատ դասիներ, թվում է ինձ, վոր սրանք ես համարված պիտի լինեյին «անազատներ», վորովհետև դժվար է յենթադրել, վոր նրանք կարող էյին պատկանած լինել ազնվական «ազատների» գասին: Պատմական ու բանասիրական նորագույն աշխատություններում «անազատ» բառը հասկացվել է միշտ նրա աշխարհաբար այժմյան նշանակությամբ: «Ազատք» և «անազատք» թարգմանվել են ուստերեն՝ свободные և несвободные: Այդ թարգմանությունները գեմ, ինչպես տեսնում ենք, կարող են լինել լուրջ տարկություններ: Ավելի ուղիղ կըլինի այդ բառերը թարգմանել «азаты» և «неазаты»: Անթույլատրելի յե, ընդհանրապես, հայոց իրավական ու սոցիալական հին արժիւնները, ինչպես «անազատ», «ազատ», «ազատութիւն», «սեպհական», «սեպհականութիւն» ետյլն՝ թարգմանել կամ լուսաբանել այդ բառերի ժամանակակից աշխարհաբար իմաստի համեմատ, այլ հարկավոր է ամեն անգամ վորոշել իրավական այն հատուկ բովանդակությունը, վոր նրանք ունեցած պիտի լինեն հին Հայաստանում:



* Shtu Кулаковскій Юл., История Византии, т. I, Киев 1918, էջ 72-74:
** Shtu Кулаковскій Юл., նույնը, էջ 73.
*** Кулаковскій Юл., նույնը, էջ 73:

Faint, illegible text at the top of the left page, possibly bleed-through from the reverse side.

Main body of faint, illegible text on the left page, appearing as ghosting from the reverse side of the leaf.



Գրառ. № 239 ր.

Տիրաժ 250

Պատ. № 4135

Տպագրական Տոկատի 2-րդ տպարան, Յերեվան:

ՀՀ Ազգային գրադարան



NL0206042

29.573

